ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«07» 10 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000082

Ձեռնարկողը՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
Ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***Վայոց ձորի մարզային նոր հիվանդանոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000082

<07> 10 2019թ.

Վայոց ձորի մարզային նոր հիվանդանոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ «Հայնախագիծ» ԲԲԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Վայոց ձորի մարզ Եղեգնաձոր համայնք

ՀՀ ԱՆ «Առողջապահական Ծիգ»-ի առաջադրանքի համաձայն նախատեսվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Զորավար Վարդան 12-րդ փողոց թիվ 1 հողամասում կառուցել մարզային նոր հիվանդանոց: Նախագծի իրականացման արդյունքում Եղեգնաձորի և Վայքի բժշկական կենտրոնների հիվանդանոցային ծառայությունները կմիավորվեն նոր կառուցվող շենքում, իսկ պոլիկլինիկական ծառայությունները կմնան երկու քաղաքների ներկայիս բժշկական կենտրոնների տարածքում՝ կենտրոնացնելով շենքային տեղակայումները մասնաշենքերից մեկում:

Նոր կառուցվող հիվանդանոցի տարածքը գտնվում է հասարակական կառուցապատման գոտում, զբաղեցնում է 1.19հա տարածք: Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Գործունեության համար նախատեսված տարածքը հարթ է, ազատ կառույցներից: Այն գտնվում է Եղեգնաձոր քաղաքի արևելյան հատվածում, Երևան-Գորիս մայրուղուց 600-700մ հեռավորության վրա: Կառուցապատվող տարածքն ազատ է այլ կառույցներից, առկա ծառատեսակները պահպանվելու են:

Համաձայն նախագծի մարզային բժշկական կենտրոնը բաղկացած կլինի մեկ հարկանի 5 մասնաշենքերից: Հիմնական մասնաշենքին հարում են տարբեր բաժանմունքների մասնաշենքերը, որոնք իրարից բաժանվում են կիսապարփակ կանաչապատ բակերով:

Բազմաֆունկցիոնալ բժշկական համալիրում կտեղակայվեն հետևյալ բժշկական ծառայությունները՝ ընդունարան և անհետաձգելի բուժօգնություն, ախտորոշիչ և լաբորատոր բաժանմունք, 36 ստացիոնար մահճակալ ունեցող հիվանդանոցային ծառայություններ մատուցող բաժանմունքներ, ներառյալ վիրաբուժական, մանկաբարձագինեկոլոգիական, մեծահասակների թերապևտիկ, ինֆեկցիոն մեկուսարան, մանկաբուժական, ինտենսիվ թերապիայի սրահ, հեմոդիալիզի բաժանմունք, արյան փոխներարկման բաժանմունք, ինչպես նաև օժանդակ այլ ծառայություններ:

Հիվանդանոցի մուտքը նախատեսված է Զորավար Վարդան փողոցից: Փողոցին կից, ինչպես նաև բժշկական կենտրոնի տարածքում նախատեսված են ավտոկայանատեղեր: Բժշկական կենտրոնի տարածքում նախատեսված է թեքահարթակներ՝ հիվանդների, այցելուների հարմար մոտեցումն ապահովելու համար, ինչպես նաև հարմարություններ՝ հաշմանդամություն ունեցող և տեղաշարժման սահմանափակումներով այցելուների համար: Տարածքի սղության պատճառով նախատեսված է կառուցել վերգետնյա հարթակ՝ բժշկական ուղղաթիռների համար, որը աստիճանավանդակով և հիվանդանոցային վերելակով կկապվի անհրաժեշտ բուժծառայությունների հետ:

Տարածքի հյուսիս-արևելյան հատվածում, տրանսֆորմատորային կայանին կից նախատեսված են՝ կաթսայատունը և հեղուկ վառելիքի ստորգետնյա պահեստարանը: Շինության արտաքին պատերը երեսպատվելու են բազալտի, տրավերտինի և տուֆի սալերով, տանիքը լանջավոր է՝ մետաղական հիմնակմախքով, մետաղական կղմինդրը՝ թերթասալերից:

Մարզային հիվանդանոցի համար նախագծված է՝ խմելու տնտեսական և հակահրդեհային առանձնացված ջրամատակարարման համակարգեր: Ջրամատակարարումը կիրականացվի քաղաքային ջրագծից՝ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն: Շուրջօրյա ջրամատակարարումն ապահովելու համար նկուղում նախատեսված են 2 խումբ պոմպեր՝ իսկ տանիքում՝ մաքուր ջրի բաքեր: Տաք ջրամատակարարումն ապահովվելու է նոր կառուցվող կաթսայատանը տեղադրվող ջրատաքացուցիչներով:

Բժշկական կենտրոնի գազամատակարարումն իրականացվելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն՝ 40 խմ/ժամ ժամային ծախսով միացվելու է Զորավար Վարդան փողոցի 219 մմ ցածր ճնշման գազատարին: Էլեկտրասնուցումը նախատեսված է իրականացնել հիվանդանոցի տարածքում կառուցվող տրանսֆորմատորային ենթակայանից:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի մակերես - 1.19հա
- բժշկական կենտրոնի մակերես - 4045քմ
- օժանդակ կառույցներ - 215քմ
- ճանապարհներ անցուղիներ, ավտոկայանատեղեր, հարթակներ - 4230քմ
- մայթեր, եզրամայթեր - 695քմ
- կանաչապատ տարածքներ - 2731քմ:

Կառուցապատման աշխատանքները կատարվելու են ըստ ժամանակացույցի, որի տևողությունը կազմելու է 18 ամիս: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում: Շինարարության փուլի համար անհրաժեշտ ջրամատակարարումն /տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման համար/ իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ջրագծից: Իսկ աշխատողների խմելու-կենցաղային կարիքների համար ջուրը կբերվի Եղեգնաձոր համայնքից: Աշխատողների կոմունալ-կենցաղային կարիքների համար շինհրապարակում կտեղադրվի բիոզուգարան, որը շինարարական աշխատանքների ավարտից հետո ապամոնտաժվելու է:

Շինարարության ընթացքում հոսքաջրերի և անձրևաջրերի հեռացման համար շինհրապարակին կից նախատեսված է պարզարան, որտեղ հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական նստեցման: Պարզեցված ջուրը կրկին օգտագործվելու է տարածքի ջրցանման համար, իսկ առաջացած նստվածքը կհեռացվի որպես շինարար:

Նոր կառուցվող բժշկական կենտրոնի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն

շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով հայտում ներկայացվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր: Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է.

- շինարարական աշխատանքների ընթացքում պարբերաբար ջրցանի իրականացում՝ փոշեառաջացման կանխման նպատակով,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում և կարգավորում,
- շինարարական նյութերի (ավազ, խիճ, հողային զանգված և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- շինհրապարակում սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով:

Շրջակա տարածքների պահպանության և վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքերը կանխարգելելու նպատակով շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները նախատեսված են տեղադրել բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը նախատեսված է իրականացնել շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում: Շաղախը և բետոնը նախատեսված է շինհրապարակ բերել բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Հայտում ներկայացվել են նաև սոցիալական հնարավոր ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Շինարարության ընթացում հարակից տարածքների համար աղմուկի հնարավոր ազդեցությունը նվազեցնող միջոցառումները ներառում են՝ շինարարական աշխատանքների և տրանսպորտային երթևեկության կազմակերպում ցերեկային ժամերին, աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգման և կարգաբերման իրականացում և այլն:

Բժշկական կենտրոնի կառուցապատման ընթացքում շինարարական աշխատանքներից կառաջանա 230մ^3 ծավալով շինարարական աղբ և 8090մ^3 մնացորդային գրունտ, որոնք ամբողջությամբ կտեղափոխվեն Եղեգնաձորի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր, իսկ կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք աղբարկղեր:

Հիվանդանոցային համալիրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները պայմանավորված կլինեն կաթսայատան արտանետումներով (գազի այրումից առաջացող ազոտի և ածխածնի օքսիդներ) և տարբեր տեսակի վտանգավոր բժշկական թափոնների առաջացմամբ:

Ժամանակակից կաթսաներով և տեղակայանքներով նախատեսված կաթսայատունը կապահովի արտանետումների ցածր ցուցանիշներ:

Հիվանդանոցային համալիրի շահագործման ընթացքում կառաջանան տարբեր տեսակի վտանգավոր բժշկական թափոններ, որոնք բարձր խտության պոլիէթիլենային տոպրակներով ժամանակավոր կպահվեն այդ նպատակի համար նախատեսված տարածքում: Ներկայումս, այդ թափոնները պայմանագրային հիմունքներով հանձնվում են «Էկոլոգիա ՎԿՀ» ընկերությանը, որի հետ համագործակցությունը կշարունակվի նաև նոր բժշկական կետրոնի կառուցումից հետո:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածքի համար մշակված կանաչապատման նախագծի համաձայն՝ կկազմակերպվի սիզամարգ, կտնկվեն ինչպես պտղատու, այնպես էլ դեկորատիվ ծառեր և կիրականացվի տարբեր տեսակների ծաղիկներով կանաչապատում: Այդ աշխատանքների համար անհրաժեշտ կլինի տարածք բերել 65 խմ բուսահող: Տարածքի ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցի միջոցով:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջ

Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայնախագիծ» ԲԲԸ կողմից ներկայացված Վայոց ձորի մարզային նոր հիվանդանոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով

Մասնագետ՝ Հ. Մկրտչյան